

395

3K13
4-68

39P



Գրութառքներ բարք յերկների, մրացել

Տ. ԵՆԳԵԼՍ

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՃՈՒՐՁԸ

343 / 158

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

ОТДЕЛ
НАЦИОНАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЫ

ՀԱՅԵՐ

ՀՊ.М.

Դ12-3437₂

Ֆ. ԵՆԳԵԼՍ

13 MAY 2005

14 NOV 2009

ՅԿՎ

Կ-68

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՃՈՒՐՁԸ



ИНВ. № 10271

Գ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939



ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՄԻԱԽԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ¹

Փյունի կոմունիստների 1852թ. դատապարտումով գերջացավ գերմանական ինքնուրույն բանվորական շարժման առաջին շրջանը: Ներկայումս այդ շրջանը համարյա մոռացված է: Այնինչ նա տեսեց 1836-ից մինչև 1852թ., և չորսիվ այն հանդամանքի, վոր արտասահմանում ամենուրեք շատ գերմանացի բանվորներ կային, այս շարժումը համարյա բոլոր կուլտուրական յերկրներում մեծ ազդեցություն ունեցավ: Սակայն այդ գեռ քիչ է: Ժամանակակից միջազգային բանվորական շարժումը ներկայացնում է ետպես այն ժամանակվա գերմանական բանվորական շարժման անմիջական շարունակությունը, վորն առհասարակ առաջին միջազգային բանվորական շարժումն էր, և վորից դուրս յեկան բազմաթիվ անձեր, վորոնք հետագայում «Բանվորների միջազգային ընկերության» մեջ զեկավար գեր են կատարել: Իսկ «կոմունիստական մանիֆեստի» տեսական սկզբունքները, վոր «Կոմունիստների միությունը» 1847թ. գրեց իր գրուի վրա, ներկայումս ծառայում են վորպես ամենաամուր ինտերնացիոնալ կապ Յելլուպայի և Ամերիկայի ամբողջ պրոլետարական շարժման համար:

Մինչև այժմ այս շարժման կապակցված պատմության համար միայն մի հիմնական աղբյուր կա: Դա այսպես կոչված՝ սկզբանը գիրքն է: «XIX հարյուրամյակի կոմունիստական

1 Մարքսի «Մերկացումներ կոմունիստների Քյունի դատավարության մասին» բրոշյուրի 1855թ. լույս տեսած յերրորդ հրատարակությանը ենդեւոի կցած առաջաբանը:



К ИСТОРИИ СОЮЗА КОММУНИСТОВ

Армгиз—Издательство полит. литературы,
Ереван 1939

դավադրությունները», վերմութիւն և Շտերերի, Բեռլին, 2 մաս, 1853 և 1854 թվականների («Die Kommunisten-Verschwörungen des 19. Jahrhunderts. Von Wermuth und Stieber»): Մեր հարյուրամյակի յերկու ամենաստոր վրատիկանական սրբիաների ստահող և դիտավորյալ կեղծիքներով մե այս հերյուրանքը դեռ այժմ ել վորպես սկզբնաղբյուր և ծառայում այն բոլոր վոչ-կոմունիստական հրատարակությունների համար, վոր նվիրված են այդ ժամանակաշրջանին:

Այստեղ յես կարող եմ միայն մի ուրիշաղիծ տալ, այն ել լոկ այն չափով, ինչ չափով վոր խոսքը վերաբերում է իրեն Միությանը, —միայն այն, ինչ բացարձակապես անհրաժեշտ է «Մերկացումները» հասկանալու համար: Հույս ունեմ, վոր ինձ գեռ կհաջողվի յերբեք մշակել Մարքսի և իմ հավաքած հարուստ նյութն այդ պահնապահ ժամանակաշրջանի, միջազդային բանվորական շարժման պատանեկության շրջանի պատմության վերաբերյալ:

1834 թ. Փարիզում գերմանական եմիգրանտների հիմնած գեմոլրատական-հանրապետական դադանի «Թշվառների միությունից» 1836 թ. ամենածայրահեղ, մեծ մասամբ պրոլետարական տարրերն անջատվեցին և կազմեցին մի նոր գաղտնի միություն՝ «Արդարների միությունը»: Սկզբնական միությունը, վորի մեջ մնացին միայն Յակոբ Վենեդիկյան նման ամենից անդորքունյա տարրերը, շուտով բռնըլին ննջեց. յերբ վոստիկանությունը 1840 թ. Գերմանիայում նրա միջանի ճյուղերի հետքը դտավ, հաղիս նրա սույներն եր մնացել: Նոր միությունն, ընդհակառակը, համեմատաբար արագ աճեց: Սկզբում նա Փրանսական բանվորական կոմունիզմի գերմանական շառավիղն եր, վոր այն ժամանակ կազմակերպվել եր Փարիզում և հարել եր բարություտական ավանդություններին. գույքի հանրականության պահանջն առաջարկվում եր վորպես «հավատարության» ան-

հրաժեշտ հետևանք: Նալատակները նույնն եյին, ինչ Փարիզի այն ժամանակվա գաղտնի ընկերությունները: Սակայն պրոլետարական, կեռ-դավադարական ընկերություն եր, ընդվորում, սակայն, Փարիզը միշտ ել համարվել և հեղափոխական գործողության կենտրոն: Թեև բնակչությունը դեպքը բերած ժամանակ Գերմանիայում ևս խլատումներ նախապատրատելլը: Բայց քանի վոր Փարիզը մնում եր վճռական ճակատամարտերի թափերքն, ուստի և Միությունն այն ժամանակ փաստորեն հանդիսանում եր սոսկ գերմանական բաժանմանը քրանսական գաղտնի ընկերությունների, հատկապես Բանկիի և Բարեհասի դեկանարած՝ «Տարվա յեղանակների ընկերության» («Société des Saisons»), վորի հետ նա սերտ կապ ուներ: 1839 թ. մայիսի 12-ին Գրանսուցիներն ապստամբությունն սկսեցին. նրանց հետ միասին դուրս յեկան նաև Միության սեկցիաները և, այսպիսով, Գրանսուցիների հետ միասին ել ընդհանուր պարտություն կրեցին:

Գերմանացիներից ձերբակարվեցին Կարլ Շապվերը և Հայնրիխ Բաուերը: Լուփ Ֆիլիպպի կառավարությունը բավականացավ յերկարատե բանտարդելությունից հետո նրանց արտաքսելով: Նրանք յերկուսն ել ուղերութեցին Լոնդոն: Շապվերը ծագումով Նասսաուի Վայլբրուդ քաղաքից եր: 1832 թ. Հետաենում նա, լինելով ուսանող-անտառագետ, մասնակցեց Գեորգ Բյուֆների կազմակերպած գլամազրությանը: 1833 թ. ապրիլի 3-ին մասնակցեց Ֆրանկֆուրտի վոստիկանական պոստի վրա կատարված հարձակմանը, վախառ արտասահման և 1834 թ. վերտիվարին մասնակցեց Մաձինիի արշավանքին դեսպի Սալվյա: Պարթե կադմվածքով, վճռական և յեռանդուն այդ մարդը, վոր միշտ պատրաստ եր զոհելու կենցաղային բարիքներն ու նույնիսկ կյանքը, նա 30-ական թվականների ընթացքում պրօֆեսիոնալ հեղափոխականի տիպար եր: Ինչպես ցույց եր տալիս նրա՝ «զեմագող» լինելուց կոմունիստ գառնալը, նրան բնակլ անմատչելի չեր տեսական հարցերի խոր ըմբռնումը՝ չնայած

նրա վորոշ դանդաղամտությանը . ինչ համոզմումք նա մի անդամ արդեն ընդունել եր , կայունությամբ այն համոզ- մանն ել մնում եր : Հենց այդ պատճառով ել նրա հեղա- փոխական հուրը յերբեմն հակասում եր նրա բանականու- թյանը . սակայն հետո նա միշտ նկատում եր իր սիմաները եր բացեիքաց խոսառվանում : Նա մի խոշոր մարդ եր , և այն , ինչ նա արել ե գերմանական բանվորական շարժման համական կազմակերպության համար , յերբեք չե մո- ռացվի :

Ֆրանկոնիացի Հայնրիխ Բառւերը կոչկակար եր : Նա մի կենսուրախ , կայտառ և սրամիտ տղա յեր , վորի փոքր միամնի մեջ , սակայն , մեծ ձկունություն և վճռականու- թյուն եր թագնլած :

Հասնելով Լոնդոն , վորտեղ Շապլերը , վոր Փարիզում գրաչարություն եր անում , սկսել եր իր գոյության միջոց- ները լեզուներ դասավանդելով հայթայթել , նրանք յերկու- սով միասին սկսում են Միության խղված կատերը նորից վերականգնել և Լոնդոնը դարձնում են նրա կենարոնը : Այս- տեղ—յեթե վոչ գեռ ավելի առաջ Փարիզում—նրանց հարում միւնեցի ժամադրծ Յոսիֆ Մոլլը : Սա միջին հասակի և քյոլնեցի ժամադրծ Յոսիֆ Մոլլը : Այս միջին հասակի մուժել մարդ եր , —քանի՛ անդամ են Շապլերի հետ միա- սին հաղթականորեն պաշտպանել դահլիճի դոները հարյու- սիր ներխուժող հակառակորդների դեմ , —մի մարդ , վո- րավոր ներխուժող վճռականությամբ առնվազն հետ չեր ըը յեռանդով ու վճռականությամբ առնվազն հետ միա- մնում իր յերկու ընկերներից , իսկ իսկով՝ յերկուսին ել դիմում իր յերկու ընկերներից , իսկ իսկով՝ յերկուսին ել , դերազանցում եր : Նա վոչ միայն բնածին դիմանալետ եր , վորի համար ապացույց են նրա՝ վորպես լիազոր բազմա- թիվ ուղևորությունների հաջողությունները , —տեսական հարցերն ել նրան ավելի ելին մատչելի : Այս յերեքի հետ հարցերն ել յետ ծանոթացա Լոնդոնում 1843 թ . : Դրանք առաջին ել յետ ծանոթացա Լոնդոնում 1843 թ . : Դրանք առաջին հեղափոխական պրոլետարեն ելին , վորոնց յետ տեսել եմ : Յեկ վորքան ել մասնակի հարցերում մեր այն ժամա- նակա հայցքներն իրարից տարբեր ելին , —նրանց սահ-

մանակակի՝ «Հավասարության կոմունիզմին»¹ այն ժամա- նակ յետ հակադրում եյի նույնքան սահմանակակի գիլի- առվայական սնապարծության վոչ պակաս գողա—այնու- ամենայնիվ յետ յերբեք չեմ մոռանա այն ուժեղ տպակո- րությունը , վոր ինձ վրա թողեցին այս յերեք խկական մարդիկ՝ այն ժամանակ , յերբ յետ դեռ միայն նույն ուղղում մարդ դառնալ :

Լոնդոնում , ինչպես և ավելի նվազ չափով՝ Շվեյցա- րիայում , միությունների և ժողովների աղատությունը լավ ծառայություն մատուցեց նրանց : 1840 թ . փետրվարի 7-ին արդեն հիմնված եր լեզար Գերմանական լուսակո- րական բանվորական ընկերությունը , վոր մինչև այժմ ել գոյություն ունի : Այս ընկերությունը Միության համար նոր անդամներ ներգրավելու վայր եր և վորովհետեւ կո- մունիստները , ինչպես միշտ , ընկերության ամենագործու- նյա և ինտելիգենց անդամներն ելին , ապա բոլորովին հաս- կանալի յե , վոր ընկերության ղեկավարությունն ամբող- ջապես Միության ձեռքին եր : Շուտով Միությունը Լոն- դոնում արդեն միջանի համայնք կամ , ինչպես այն ժա- մանակ անվանում ելին , «ժողովարան» ուներ : Հենց այս ինքնին հասկանալի տակտիկան կիրառում եր Շվեյցա- րիայում և այլ վայրերում : Ամենուրեք , վորտեղ հնարա- վոր եր բանվորական ընկերություններ հիմնել , նրանց նույն ձեռով ել ողտագործում ելին : Իսկ վորտեղ որենքով արդելիած եր այդ , Միության անդամները մտնում ելին յերգեցիկ , մարմարադարձական և այլ նման ընկերություն- ների մեջ : Կապը գլխավորապես պահպանվում եր Միու- թյան մշտական յեկող-գնացող անդամների միջոցով , վո- րոնք իրեն եմիսար ելին հանդես գալիս այստեղ , վորտեղ ոլահանջլում եր : Յեկ այս և այն դեպքումն ել Միությա- նը մեծ ծառայություն ելին մատուցում այն իմաստուն կտ- ուր մեծ ծառայություն ելին մատուցում այն իմաստուն կտ-

1 «Հավասարության կոմունիզմ» ասելով յետ հասկանում եմ , ինչ- պես վերկում արդեն ասված ե , այն կոմունիզմը , վոր հենվում և բա- ցառապես կամ գերազանցապես հավասարության պահանջի վրա : (Են- գելսի ժամաքարությունը) :

ռավաբությունները, վորոնք իրենց դուր չեկող ամեն մի բանվորի, —իսկ նրանցից տասից իննը Միության անդամ էյին, —արտաքսում եյին և այդպիսով զարձնում եմիսար:

Վերականգնված Միության կազմակերպությունը զբաղվ ծագալ ստացավ: Մասնավորապես Շվեյցարիայում՝ Վայութինգը, Ավգուստ Բեները (արտակարդ մտքի տեր մի մարդ, վոր շատ զերմանացիների պես՝ ընկալ ներքին անկայունության պատճառով) և ուղիները մի ուժեղ կազմակերպություն ստեղծեցին, վորը քեզ թե շատ չափով հակվում եր զեպի Վայութինգի կոմունիստական սխանքը: Այսուղ վայութինգյան կոմունիզմը քննադատելու տեղը չե: Իսկ ինչ վերաբերում է նրա նշանակությանը՝ վորպես զերմանական սլովետարիատի առաջին ինքնուրույն տեսական շարժման, ապա յետ հիմա ել սոորադրում եմ Մարքսի այն խոսքերի տակ, վոր տովֆած են Փարիզի «Vorwärts»-ում 1844 թ.՝ «Բուրժուազիայի (զերմանական) մոտ, իր փիլիսոփաների և գրքի մարդկանց հետ միասին, վորաեղ կդտնեք այնպիսի մի յերկ բուրժուազիայի ազատազրության՝ քաղաքական աղաւազրության՝ մասին, ինչպիսին վայութինգյան «Ներդաշնակության և ազատության յերաշխիքները» յերկն է: Բավական և համեմատել զերմանական քաղաքական գրականության վախկոտ, տափակ միջակությունը զերմանական բանվորների այս անզուգական, փայլուն առաջին յերաշխիքի հետ, բավական և համեմատել պրոլետարիատի այս հոկայական մանկական վոտեամանները բուրժուազիայի դաճաճի մաշված քաղաքական կոչիկների հետ՝ տեսնելու համար, վոր այս Մոխրատիտիկի մեջ տպագա ըմբիշն եթագնված»: Ցեկ այդ ըմբիշը ներկայում իր ամբողջ հասկով կանոնած և մեր առջե, թեև նա դեռ իր լիակատար հասակը չի առել:

Գերմանիայումն ել բազմաթիվ սեկցիաներ կային, վորոնք թեև ըստ իրենց եյության անցողիկ բնույթ ունեյին, սակայն նոր ծագողների թիվը քայլարդողների թիվը ամենի մեջ եր: Միայն յոթ տարի անց, 1846 թ. վերջին, վորտիկանությունը կարողացավ Բենետել մասնավորապես (Մենտել) և Մադ-

գերությում (Բեք) հայտարերել Միության հետքերը, սակայն նրան չհաջողվեց ավելի հետամտել:

Վայութինգը 1840 թ. դեռ Փարիզում գտնված ժամանակ, նախքան Շվեյցարիա մեկնելը, նույնպես հայտքեց ցրված տարրերին:

Միության կորիզը կազմում եյին գերձակները: Գերմանացի զերմանկներ կային ամենուրեք՝ Շվեյցարիայում, Լոնդոնում, Փարիզում: Վերջինում զերմաներենը գերձակության արհեստի մեջ շատ տարածված եր. 1846 թվականին յես այնուեղ ճանաչում եյի մի նորվելացի զերձակ, վորը ծովով ֆրանսիա յեր յեկել ուղղակի Դրոնահայմից և 18 ամսվա ընթացքում վոչ մի Փրանսերեն բառ չեր յուրացրել, այնինչ հրաշալի սովորել եր զերմաներեն խոսել: 1847 թ. Փարիզի համայնքներից յերկուսը կազմված եյին առաջիւղակես զերձակներից, մեկը՝ կահ-կարասիք պատրաստող տաղածակործներից:

Այն ժամանակվանից, յերբ ծանրության կենարունը Փարիզից Լոնդոն վոտեաշրջեց, մի նոր մոմենտ առաջին պլան մղից՝ Միությունը հետպէստե զերմանականից զարձակի ինտերնացիոնալ: Բացի զերմանացիներից և Շվեյցարացիներից՝ բանվորական ընկերության մեջ եյին մանում նաև այն բոլոր աղջությունների անդամները, վորոնք վլասվուագեստների պատճեն զերմաներենն եյին դործածում իրեւ բոլորի համար ընդհանուր լեզու: Դրանք սկանդինավացիներ եյին, հունացիներ, հունդարացիներ, չեխեր, հարավլուսիներ, ինչպիսի սուսներ ու ելզացիներ: 1847 թ. մշտական հյուրեր, ի միջի այլոց, մի անզիլական գվարդիական դրենագեր՝ համազգեստով: Բնկերությունը շուտով ուկաց կոչվել կոմունիստական բանվորական լուսավորական ընկերություն: Անդամառոմների վրա առաջազն քսան յեղուներով, ձիչտ և, տեղ-տեղ վոչ առանց սիսալի, գրված եր հետեւյալ նշանաբանը՝ «Բոլոր մարդիկ յեղրայր են»: Գաղտնի միությունը, ինչպես և բաց ընկերությունը, շուտով ալիքների ինտերնացիոնալ բնույթ ընդունեց, ոկրում, ճիշտ և, միայն սահմանափակ իմաստով՝ գործնականորեն՝ նրա

անդամների խայտաբղետ աղջույնին կազմի չնորշիլ, ահա-
սականորեն՝ այն համոզունքի չնորհիլ, թե ամեն հեղա-
փոխություն, հաղթական դառնալու համար, պետք է լի-
նի լեվոպական։ Սրանից հեռուն դեռ չին դնում, սա-
կայն հիմքը գրված եր:

Միությունը Փրանսական հեղափոխականների հետ սերտ
կապ եր պահպանում կոնդոնի եմիգրանտների՝ 1839 թ.
մայիսի 12-ի պայքարին մասնակցողների միջոցով։ Նույն
ել ուղղիկալ լեհերի հետ։ Պաշտօնական լեհական եմիգրա-
ցիան և Մաճինին, իհարկե, ավելի շուտ հակառակորդ
ելին, քան դաշնակից։ Անդիմական չարտիստները, նրանց
շարժման հատուկ անդլիմական բնույթի հետեանքով, մի
հոգմն ելին թողնված վորպես վոչ հեղափոխական տարր։
Նրանց հետ Միության կոնդոնի գեկալարները կազմ մեջ
մտան միայն հետազայտում թմ միջոցով։

Միության բնույթն ուրիշ կողմերով ել եր փոխվում
դեպքերի ընթացքի հետ միասին։ Թեև Փարիզի վրա այն
ժամանակ դեռ շարունակում ելին նայել—եւ լիովին հիմք
կար նայելու, վորպես հեղափոխության հայրենիքի վրա,
այնուամենայնիվ կախումը Փարիզի դավադիրներից ար-
դեն գաղարել եր։ Միության աճման հետ զուգընթաց բարձ-
րանում եր նաև նրա ինքնազիտակցությունը։ Զգացվում
եր, վոր շարժումն ավելի ու ավելի արմատներ եր դցում
զերմանիայի բանվոր դասակարգի մեջ և վոր գերմանա-
կան բանվորները պատմության կողմից կոչված են հյուսի-
սային և արևելյան Յեվրոպայի բանվորության համար դրո-
շակիր լինելու։ Նրանք հանձին վայտլինդի ունելին կոմու-
շակիր լինելու։ Նրանք հանձին վայտլինդի ունելին կոմու-
շակիր մի տեսաբան, վորին համարձակ կարելի յեր այն ժա-
մանակվա նրա Փրանսական մցորդների կարգը դասել։
Վերջապես, մայիսի 12-ի փորձը ցույց տվեց, վոր խլըր-
տումները վոչ մի արդյունք տալ չեն կարող։ Յեկը յեթե
տմեն անցք դեռ շարունակում ելին մեկնարանել վորպես
վերահաս փոթորկի նախանշան, յեթե չին կիսադամադրա-
կան կանոնադրությունը դեռ ամբողջովին պահպանվում
եր, ապա դրա մեղքը գիշավորապես չին հեղափոխական

համառությանն ե, վոր արդեն սկսել եր բաղխվել իրենց
համար ուղի Հարթող ավելի ճիշտ հայացքների հետ։

Միության սոցիալական դոկտրինան, ընդհակառակն, իր
ամբողջ անորոշության հետ միասին հատկանշվում եր մի
խոչոր թերթությամբ, վորը, սկզբ, բղխում եր հենց հա-
սարակական հարաբերություններից։ Միության անդամնե-
րը, յեթե նրանք առհասարակ բանվոր ելին, իսկն ասած,
համարյա բացառապես արհեստավորներ ելին։ Նրանց շա-
հագործող մարդը նույնիսկ խոչոր համաշխարհային կենտ-
րուններում մեծ մասամբ միայն մանր վարպետն եր։ Նույն-
իսկ խոչոր մասշտաբի գերձակության արհեստագործության
մեջ, այժմ այսպիս կոչված կոնֆեկցիոն արդյունաբերու-
թյան մեջ գերձակությունը խոչոր կապիտալիստի համար
աշխատող անային արդյունաբերության վերածելու միջո-
ցով կասարպող շահագործումն այն ժամանակ նույնիսկ
կոնդոնումն ել նոր եր սկսել ծնունդ առնել։ Մի կողմից,
այս արհեստավորներին շահագործողը մանր վարպետն եր,
մյուս կողմից՝ նրանք իրենք ել հույս ունելին վերջիվերջո
մանր վարպետ դասնակ։ Ընդունին այն ժամանակվա գեր-
մանական արհեստավորը դեռ զտնվում եր ժառանգություն
ստացած բազմաթիվ համբարական հասկացողությունների
ազգեցության տակ։ Այդ արհեստավորները գեռնես խկա-
կան պրոլետարներ չելին։ Նրանք մանր բուրժուազիայի
կցորդն ելին միայն, վորը նոր պետք եւ դասնար ժամանա-
կակից պրոլետարիատ և դեռ ուղղակի հակառակած չեր
բուրժուազիային, այսինքն՝ խոչոր կապիտալին։ Յեկ մե-
ծագույն պատմով և անում նրանց այն հանդամանքը, վոր
նրանք իմիմակի գանվեցին բնադրաբար կանխակալել իրենց
ապագա զարդարումը և կազմակերպվել, թեև վոչ լիո-
վին գիտակցաբար, իբրև պրոլետարիատի կուսակցու-
թյուն։ Բայց նրանց հին արհեստավորական նախապահար-
ժունքներն ամեն անդամ նրանց շփոթության մեջ ելին
դցում, յերբ բանը վերաբերում եր գոյություն ունեցող
հասարակության մանրամասն քննադատությանը, այսինքն՝
անտեսական փաստերի վերլուծմանը։ Յեկ այդ անփուսա-

փելի յեր : Կարծում եմ , վոր այն ժամանակ ամբողջ Միության մեջ մի մարդ չկար , վոր քաղաքատնտեսությունից գոնե մի զերք կարգացած լիներ : Ինչ փույթ . «Հայաստարությունը» , «յեղայրությունը» , «արդարությունն» ու նույն եյին ամեն տեսական բարձունք նվաճելուն :

Այնինչ Միության և Վայտինդի կոմունիզմի կողքին մի նոր կամունիզմ եր տեսզիւլ , վոր եյապես տարբեր վում եր առաջինից : Մանչեստրում առլելիս յես , ինչպես ասում են , զլիսի ընկա , վոր տնտեսական վաստերը , վոր մինչ այժմ պատմական յերկերում վոչ մի զեր չեն խաղում , կամ խղճուկ գեր են խաղում , դեռ ժամանակակից աշխարհի համար պատմական վճռական ուժ են ներկայացնում . թե տնտեսական վաստերը կազմում են այն հիմքը , վորի վրա առաջ են գալիս արդի գասակարգային հակադրությունները . թե այդ դասակարգային հակադրությունները բոլոր այն յերկներում , վորտեղ նրանք խոշոր արդյունաբերության շնորհիվ լիակատար զարգացման են հասել , —մասնավորապես , հետեւարար , Անդիայում , —իրենց հերթին կազմում են քաղաքական կուսակցությունների ձևակերպման հիմքը , կուսակցական պայքարի և դրա հետ միասին նաև ամբողջ քաղաքական պատմության հիմքը : Մարքսը վոչ միայն նույն հայացքներին եր յեկել , այլև այդ հայացքներն ընդհանրացրել եր տակալին «Deutsch-Französische Jahrbücher»-ում (1844 թ.) այն իմաստով , թե վոչ թե պետությամբ և պայմանավորվում և վորոշվում քաղաքացիության հասարակություննը , այլ քաղաքացիական հասարակությամբ և պայմանավորվում և վորոշվում պետությունը , թե , հետեւարար , քաղաքականությունն ու իր պատմությունը պետք ե բացարել տնտեսական հարաբերություններով և նրանց զարգացմամբ , և վոչ ընդհականը : Յերբ յես 1844 թ. ամառը Փարիզում այցելեցի Մարքսին , պարզվեց , վոր մենք բոլոր տեսական բնագալառում լիովին համամիտ ենք : Այդ ժամանակակից սկսվեց մեր համարական աշխարհի մասունքը պարունակությունը ունենալու առաջնային արդիքությունը և դրանով իսկ դասակարգային պայքարից : Կոմունիզմն այսուհետև արդեն նշանակում եր վոչ թե ըստ հասարակությունն աղատելու դասակարգային պայքարից : Կոմունիզմն այսուհետև արդեն նշանակում եր վոչ թե ըստ հասարակությունն աղատելի կատարյալ հասարակական իդեալի ֆանտաստիկ հնարում , այլ պրոլետարիատի մղած պայքարի բնության , պայմանների և դրանցից բղիող՝ պայքարի ընդհանուր նպատակների ըմբռում :

Ենթադիցաւ հիմնական դրույթներից , արդեն գլխավոր գծերով զարդացրել եր պատմության իր մատերիալիստական տեսությունը , և մենք ձեռնարկեցինք այդ նոր հայցքների մանրամասն մշակման ամենաբազմազան ուղղություններով :

Սակայն այս հայտադործությունը , վորը հեղաշրջում առաջ բերեց պատմական գիտության մեջ և , ինչպես մենք տեսնում ենք , հիմնականում Մարքսի գործն ե , վորին յետ շատ քիչ մասնակցություն կարող եմ վերադրել ինձ , անձիքական նշանակություն ունեցավ իրեն ժամանակակից բանվորական շարժման վրա : Կոմունիզմը քրանսացիների և գերմանացիների մոտ , չարտիզմն անզլիացիների մոտ այլիս ինչ-վոր պատահական բան չեյին թվում , վոր կարող եր նույն հաջողությամբ ել վինել : Այդ շարժումներն այժմ ներկայանում եյին ժամանակակից ճնշված դասակարգի՝ պրոլետարիատի շարժումներ , տիրող դասակարգի՝ բուրժուազիայի գեմ նրա մղած պատմականորեն անխուսափելի պայքարի քիչ թե շատ զարգացած ճներ , դասակարգային պայքարի ճներ , վորոնք , սակայն , տարբերվում են նախական պատմական պայքարից նրանով , վոր ժամանակակից մասնական պատմակարգային պայքարից նրանով , աղատելու դասակարգը՝ պրոլետարիատը՝ չի կարող իր պատմադրումը ճնեք բեկել՝ առանց միաժամանակ ամբողջ հասարակությունն աղատելու դասակարգերի բաժանելու մինելուց և դրանով իսկ դասակարգային պայքարից : Կոմունիզմն այսուհետև արդեն նշանակում եր վոչ թե ըստ հասարակությունն աղատելի կատարյալ հասարակական իդեալի ֆանտաստիկ հնարում , այլ պրոլետարիատի մղած պայքարի բնության , պայմանների և դրանցից բղիող՝ պայքարի ընդհանուր նպատակների ըմբռում :

Մենք բնավ մտադրություն չունեյինք բացառապես «գիտական» հշիսարհին հաղորդելու նոր գիտական արդյունքների մասին՝ շարադրելով գրանք հաստափոր գրքերում : Բնդհակառակը : Մենք յերկուս ել խոր միջնիւ երինք քաղաքական շարժման մեջ : Մենք արդեն հետեւորդներ ունեյինք մտավորականության մեջ , առանձնապես

Արևմտյան Գերմանիայում, և նշանակալից կապեր՝ կաղմակերպված պլրությունարիատի հետ: Մեղ վրա պարտականությունը եր ընկնում գիտականորեն հիմնալորել մեր հայցքները սակայն մեղ համար պակաս կարեռ չեր համոզել յելրոպական և ամենից առաջ դերմանական պրոլետարիատին, թե մեր հայացքները ճշմարիտ են: Յերբ ինքներս մեղ համար ամեն ինչ պարզեցինք, ձեռնարկեցինք գործի: Բրյուսսելում մենք հիմնեցինք Գերմանական բանվորական ընկերությունը և ձեռք բերինք «Deutsche Brüsseler Zeitung»-ի գեկալարությունը, պորը մնաց մեր որդանը մինչև փետրվարյան հեղափոխությունը: Անդիմական չարտիստների հեղափոխական մասի հետ մենք կապ եյինք պահպանում Զուլիան Հառնիք միջոցով, վորը խմբագիրն եր այդ շարժման կենտրոնական որդանի՝ «The Northern Star»-ի, վորին յես աշխատակցում եյի: Մենք Բրյուսսելի դեմոկրատների հետ ել տեսակ կոունիցիայի մեջ եյինք գոտնվում (Մարքուս «Դեմոկրատական ասսոցիացիայի» փոխախաղահն եր), ինչպես և ֆրանսական սոցիալ-դեմոկրատների հետ, վորոնց «Réforme» թերթին յես հաղորդագրություններ եյի ուղարկում անդլիական և դերմանական շարժման մասին: Մի խոռօք՝ մեր կապերը ուսդիկալ և պրոլետարական կազմակերպությունների և մամուլի որդանների հետ լիովին համապատասխանում եյին մեր ցանկություններին:

«Արդարների միության» հետ մենք հետեւյալ հարաբերության մեջ եյինք գտնվում: Միության գոյությանը մենք, հարկավ, տեղեկացված եյինք: 1843 թ. Շապակերն ինձ առաջարկեց մտնել Միության մեջ. սակայն յես այն ժամանակակից մտնել Միության մեջ. սակայն յես այն ժամանակ, իհարկե, մերժեցի այդ առաջարկը: Բայց և այն պես մենք վոչ միայն լոնդոնցիների հետ մշտական թղթական վություն ունեյինք, այլև ել ավելի սերտ հարաբերություն եյինք պահպանում դոկտոր Եվերբեկի հետ, վորը դեկանում եր Փարիզի համար, մորի աչքին ամեն տեղ ախոյաններ, թագ-Նելված թշնամիներ և վորովայթներ եյին յերևում: Յերկրից յերկիր հալածվող մարդարեյի պես՝ նա իր գրապանում կրում եր յերկնքի արքայությունը յերկրի վրա կենսադոր-ծելու պատրաստի դեղատոմսը և յերևակայում եր, վոր ամեն մարդու միտքը միայն այն և, թե ինչպես գողանա նրա այդ դեղատոմսը: Վայտլինդը դեռ կոնդոնում դժուլեց Միության անդամների հետ, ինչպես նաև Բրյուսսելում, վորուեղ Մարքսն ու իր կինը դեպի նա արտասովոր, համարյա գերմարդկային համբերատար վերաբերմունք ցու-

կողմից՝ մենք բանավոր, գրավոր և մամուլի միջոցով ազդում եյինք նրա ամենաականավոր անդամների տևական հայացքների վրա: Նույն նպատակին եյին ծառայում զանազան լիտոգրաֆիական շրջաբերականները, վոր մենք հատուկ դեղբերում, յերբ խուքը վերաբերում եր ստեղծվող կոմունիստական կուսակցության ներքին գործերին, ուղարկում եյինք աշխարհի բոլոր կողմերը մեր բարեկամներին և թղթակիցներին: Այս ՀՀարբերականներում յերբեմն խոսվում եր և Միության մասին: Այսպես, որինակ, մի յերիտասարդ վեստֆալցի ուսանող՝ Հերման Քրիստե անունով՝ ուղևորվելով Ամերիկա, այնտեղ հանդես և գտնիս վրապես Միության եմիսար, կապ և հաստատում խելազար շառու շառինդի հետ՝ նպատակ դնելով Միության ողնությամբ շարավային Ամերիկայում հեղաշրջում առաջ բերել: Նա մի թերթ և հիմնում, վորի մեջ Միության անունից քարոզում և «սիրո» վրա հիմնված, սիրով առցուն, չափազանց սենտիմենտալ մի կոմունիզմ: Նրա դեմ մենք դուրս յեկանք մի շրջաբերականով, վոր անհետեանք չմնաց—Քրիստեն Միության ասպարեզից չքացավ:

Հետազայում Բրյուսսել յեկալ Վայտլինդը: Սակայն նա այլևս այն միամիտ, յերիտասարդ յենթալարպետ-դերձակը չեր, վոր զարմացել եր իր սեփական տաղանդի վրա և ջանում եր պարզել իր համար, թե ինչ տեսք և ունենալու կոմունիստական հասարակությունը: Նա մեծ մարդ եր, վորին նախանձները հետապնդում եյին նրա դերազանցության համար, վորի աչքին ամեն տեղ ախոյաններ, թագ-Նելված թշնամիներ և վորովայթներ եյին յերևում: Յերկրից յերկիր հալածվող մարդարեյի պես՝ նա իր գրապանում կրում եր յերկնքի արքայությունը յերկրի վրա կենսադործելու պատրաստի դեղատոմսը և յերևակայում եր, վոր ամեն մարդու միտքը միայն այն և, թե ինչպես գողանա նրա այդ դեղատոմսը: Վայտլինդը դեռ կոնդոնում դժուլեց Միության անդամների հետ, ինչպես նաև Բրյուսսելում, վորուեղ Մարքսն ու իր կինը դեպի նա արտասովոր, համարյա գերմարդկային համբերատար վերաբերմունք ցու-

յաբերեցին։ Նա բոլորի հետ անհաշտ էր։ Այդ պատճառով
ել նա չուտով գնաց Ամերիկա, վորպեսի այնուեղ փորձի
մարդաբեյի դերում դուրս դալ։

Այս բոլոր հանգամանքները նպաստեցին այն հեղաշրջ-
մանը, վորն աննկատելի կերպով կատարվեց Միության
մեջ և հատկապես Լոնդոնի ղեկավարների մեջ։ Երանց հա-
մար հետզհետե սկսեց պարզ դառնալ մինչ այդ գոյություն
ունեցող կոմունիստական հայացքների՝ ինչպես համաս-
տության ֆրանսական պրիմիստիվ կոմունիզմի, այնպես և
վայալինդյան կոմունիզմի նաև մենքությունը։ Այն հանգաման-
քը, վոր Վայալինդն սկսեց կապ սահմանել կոմունիզմի և
քրիստոնեության միջև, հակառակ նրա «Խեղճ մեղադարձարտի
ամեւարանը» գրքի առանձին դրույթների հանճարեղու-
թյանը, Շմեյցարիայում այն արդյունքն ունեցավ, վոր
շարժումը մեծ մասամբ ընկալ սկզբում Ալբրեխտի նման
հիմարների ձեռքը, իսկ հետո՝ կուլմանի նման շահասեր
մարդարեցառատանների ձեռքը։ «Ճշմարիտ սոցիալիզմը»,
վոր միքանի բելետրիստներ եյին տարածում և վորը հան-
դիսանում եր Փրանսական սոցիալիստական տեսություննե-
րի թարգմանությունն աղջատված հեղելյան-դերմաներին
ինքի և սենատիմենտալ-յերազական մարդասիրություն եր
(տե՛ս «Կոմունիստական մանիֆեստի»՝ դերմանական կամ
«Ճշմարիտ» սոցիալիզմին վերաբերող բաժինը)՝—այս սո-
ցիալիզմը, վոր համապատասխան գրականության հետ միա-
սին Միության մեջ եր մուծել Հերման Կրիգեն, պետք և իր
լորձնուանկարությամբ գարշանք հարուցեր Միության հին
հեղափոխականների մեջ։ Մինչ այդ գոյություն ունեցող
տեսական պատկերացումների սնանկությունը և դրանցից
բավող գործնական սիստեմը հետզհետե լոնդոնցիներին
համոզեցին, վոր մեր—Մարքսի և իմ—նոր տեսությունը
ձեշտ ե։ Այս հայացքի յուրացմանն անշուշտ նպաստեցին
այն ժամանակ Լոնդոնի առաջնորդների մեջ դանվող յեր-
կու մարդ, վորոնք տեսական խմացության իրենց ընդու-
նակություններով զգալիորեն գերազանցում եյին մյուսնե-
րին. դրանք եյին՝ հայլերոնցի կենդանագիր-մանրանկարիչ

կար Պֆենդերը և Թյուրինգացի գերձակ Գեորգ Եղարե-
սւուը¹։

Վերջապես, 1847 թ. գարնանը Մուլը յեկալ Բրյուսսել
Մարքսի մոտ և դրանից անմիջապես հետո՝ Փարիզ ինձ
մոտ, վորպեսզի իր ընկերությի անունից մեզ խնդրի Միու-
թյան մեջ մտնել։ Երանք, ըստ նրա հայտարարության, հա-
մոզված եյին ինչպես մեր հայցքների ընդհանրապես
ձատության մեջ, այնպես ել Միությունը հին դավագրա-
կան ավանդություններից ու ձեւերից ազատելու անհրաժեշ-
տության մեջ։ Յեթե մենք ցանկանանք Միության մեջ
մտնել, ապա մեր հնարավորություն կտրվի Միության հա-
մագումարում շարադրել մեր քննադատական կոմունիզմը
մանիֆեստի ձևով, վորը դրանից հետո կը բատարակի վոր-
պես Միության մանիֆեստ։ Դրա հետ մեկտեղ մենք հնա-
րավորություն կունենանք նպատելու, վոր Միության
հնացած կազմակերպությունը փոխարինվի նոր, ավելի
նպատակահարմար, ժամանակի պայմաններին համապա-
տասխանող կազմակերպությամբ։

Վոր գերմանական բանվոր դասակարգի համար մի կաղ-
մակերպություն անհրաժեշտ ե՞ն թեկուզ պրոլետարյացի-
նպատակներով, և վոր այդ կազմակերպությունը, յեթե
նա բացատազես տեղական բնույթ չունի, նույնիսկ Գեր-
մանիայի սահմաններից դուրս ել կարող և միայն դադոնի
կազմակերպություն լինել, դրանում մենք կասկած չունե-
ցինք։ Սակայն հետո այդպիսի կազմակերպություն ել ար-
դեն դոյություն ուներ. դա Միությունն եր։ Այն, ինչ մենք

1 Պֆենդերը սրանից մոտ ութ տարի առաջ մեռավ Լոնդոնում։ Նա
նուրբ, որին նաև մտքի տեր, սրամությամբ, յերկիցանքով, դիս-
ուերը, որինինալ մտքի տեր, սրամությամբ, յերկիցանքով, դիս-

մինչ այժմ Միության թերությունն ելինք համարում, այժմ նրա ներկայացուցիչներն իրենք պատրաստ են վերացնելու և մեզ ել հրավիրել են մասնակցելու նրա վերակազմությանը: Կարո՞ղ ելինք մենք հրաժարումով պատրաստանել: Հասկանալի յե, վոչ: Ուստի և մենք մտանք Միության մէջ: Մարքսը Բրյուսոսելում մեր մոտիկ բարեկամներից Միության մի համայնք կազմակերպեց, մինչդեռ յետ հաճախում եյի Փարիզի յերեք համայնք:

1847թ. ամառը Լոնդոնում տեղի ունեցավ Միության առաջին կոնֆերենսը, վորաեղ Վ. Վոլֆը ներկայացնում եր Բրյուսոսելի համայնքները, իսկ յես՝ Փարիզի: Այստեղ ամենից առաջ անցկացվեց Միության վերակազմությունը: Վոչնչացվեց այն ամենը, ինչ հին միստիկական անուններից դեռ մնացել եր, ինչ դավագրական ժամանակներից պահպանվել եր Միության մէջ: Միության կազմակերպությունը բաղկացած եր համայնքներից, ոկրուգներից, դեկալար ոկրուգներից, կենտրոնական կոմիտեյից և կոնֆերենցից. և այդ ժամանակից ել նրա անունը հաստատվեց՝ «Կոմունիստների միություն»: «Միության նպամատկն ե՝ բուժուազիայի տապալումը, պրոլետարիատի տիրապետությունը, հին՝ դասակարգերի ներհակության վրա հիմնված՝ բուժուական հասարակության վոչնչացումը և առանց դասակարգերի ու առանց մասնավոր սեփականության նոր հասարակության հիմնումը», —այս և ասում առաջին պարագաները: Կազմակերպությունն ինքը լիովին դեմոկրատական եր, ընտրովի և ուզած ժամանակի վոխարինելի կոմիտեներով: Հենց միայն այս փակում եր դիկտուտուրա պահանջող դավագրության ամեն ձգտման ճանապարհը. և Միությունը—գեթ սովորական խաղաղ ժամանակվահամար—վերածվեց զուտ պրոպագանդիստական ընկերության: Այս նոր կանոնադրությունը հանձնվեց համայնքներին ի քննարկություն, —այդպես գեմոկրատիկ կերպով եյին այժմ զործում, —վորից հետո մի անգամ ել վերանայվեց և վերջնականորեն ընդունվեց 1847թ. գեկտեմբերի 8-ին յերկ-

որրդ կոնֆերենսում: Նա տպագրվեց «Վերմութ և Շտիբեր»-ի մոտ, հ. I, էջ 239, հավելված X:

Յերկրորդ կոնֆերենսը տեղի ունեցավ նույն թվի նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին: Կոնֆերենսին ներկայել նաև Մարքսը, վորը յերկարատև վիճաբանություններում—կոնֆերենսը տևեց առողջապահ տասն որ— նոր տեսություն եր պաշտպանում: Բոլոր տարածայնություններն ու կասկածանքները, վերջապես, վերացան և նոր սկզբունքներն ընդունվեցին միաձայն: Մարքսին և ինձ հանձնարարվեց մասնիքեստ մշակել: Այդ հանձնարարությունը կատարվեց ամենամոտիկի ժամանակում և փետրվարյան հեղափոխությունից միքանի շարաթ առաջ ուղարկվեց Լոնդոն տպագրելու համար: Այդ ժամանակից ի վեր Մանկֆեստն ամբողջ աշխարհն ե շրջել, թարգմանվել և համարյա բոլոր լեզուներով և մինչեւ այժմ շարունակում և ծառայել վորպես ամենաբազմազան յերկրների պրոլետարական շարժման ուղեցույց: Միության՝ «Բոլոր մարդիկ յեղբայր են» հին նշանաբանի տեղը բռնեց նոր մարտական լոգունդը, —«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք», —վորը բացեիրաց հայտարարում և պայքարի միջազգային ընույթը: Տասնյոթ տարի հետո այդ լոգունդը վորպես Բանվորների միջազգային ընկերության մարտական կոչ վորոտաց ամբողջ աշխարհում, և ներկայումս բոլոր յերկրների պայքարող պրոլետարիատը գրել ե այդ լոգունդն իր գրոշակի վրա:

Բոնկիվեց փետրվարյան հեղափոխությունը: Լոնդոնի կենտրոնական կոմիտեն իսկույն իր լիազորությունները վերահանձնարկեց Բրյուսոսելի դեկավար ոկրուղին: Սակայն այս վորոշումը Բրյուսոսելում ստացվեց այն ժամանակ, յերբ այստեղ արդեն փաստորեն պաշարողական դրությունն եր իշխում, և գերմանացիները վոչ մի տեղ այլևս չեյին կարող ժողով գումարել: Մենք բոլորս պատրաստվեցինք Փարիզ գնալու, և նոր կենտրոնական կոմիտեն վորոշում կայացրեց նույնպես լուծել իր կազմակերպությունը, բոլոր իր լիազորությունները հանձնել Մարքսին և

նրան լիազորել Փարիզում անհստպաղ նոր կենտրոնական կոմիտե ստեղծել: Այն հինգ հոդին, վոր այս վորոշումն ընդունել ելին (1848 թ. մարտի 3), դեռ չեյին կաբոզացել ցըլել, յեր Մարքսի բնակարանը ներխուժեց վաստիկանությունը, ձերբակալեց նրան և ստիպեց հետեւյալ որն իսկ Ֆրանսիա մեկնելու, ուր նա հենց պատրաստվում էր գնալ:

Շուտով մենք բոլորս դարձյալ հանդիպեցինք Փարիզում: Այսուղի կազմվեց նոր կենտրոնական կոմիտեյի ստորագրությամբ հետեւյալ փաստաթուղթը, վոր ամբողջ Գերմանիայում տարածվեց և վորից շատերը ներկայումս են կարող են վորեւ բան սովորել.

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՀԱԽՆԵՐԸ
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

1. Ամբողջ Գերմանիան հայտարարվում է միասնական անբաժան հանրապետություն:

3. Ժողովրդական ներկայացուցիչները ոռնիկ են սահմանում, վորպեսզի բանվորն ել հնարավորություն ունենամասնակցելու գերմանական ժողովրդի պառամենափ նիստերին:

4. Ժողովրդի ընդհանուր դինում:

7. Իշխանական և այլ Փեողարական հողային կալվածքները, բոլոր հանքերը, հանքահորերը և այլն դասնում են պետության սեփականություն: Այս հողերի վրա իշտ ամբողջ հասարակության տնտեսությունը տարվում է խոշոր մասշտարով և ամենանորագույն, գիտության հանձնարարած ոժանդակ միջոցների ոգնությամբ:

8. Գյուղացիական հողերի հիպոթեկները հայտարարվում են պետության սեփականություն: Այդ հիպոթեկների տոկոսները գյուղացիները վճարում են պետությանը:

1 Ենդեւմն այստեղ «Պահանջները» բերում ե կրօնա ձեռք: Դրանք լիահար կերպով ապարագած են Մարքսի և Ենդեւի Յերկերի V հատորում, եջ 585—586:—Խմբ.:

9. Այն մարզերում, վորտեղ վարձակալությունն է գարգացած, հողային ունատան իրամ վարձավճարը տրիտում և պետության իրեւ հարկ:

11. Գետությունն իր ձեռքն է վերցնում տրանսպորտացին բոլոր միջոցները՝ յերկաթուղիները, ջրանցքները, շոգենավերը, սայլուղիները, փոստը և այլն: Դրանք գտնում են պետական սեփականություն և ձրի տրամադրիտում չունեոր գասակարգին:

14. Ժառանգության իրավունքի սահմանափակում:

15. Պրոդրեսիվ հարկերի բարձր գրույքների սահմանում և ուժամբան առարկաների հարկերի վերացում:

16. Ազգային արհեստանոցների կառուցում: Պետությունն ապահովում է բոլոր բանվորների գոյության միջոցները և աշխատանքի անընդունակների խնամատարությունը վերցնում է իր վրա:

17. Ընդհանուր և ձրի ժողովրդական կրթություն:

Գերմանական պրոլետարիատի, մանր բուրժուազիայի և դյուլացիության շահերի համար ամբողջ յեռանգով սժանդակել վերոհիշյալ միջոցառումների կիրառմանը կյանքում: Դրանց կենացքը մասնակի միայն միլիոնավոր մարդիկ, վորոնց մինչ այժմ Գերմանիայում սակալաթիլ անձեր շահագործել են և կաշխատեն այսուհետեւ ել ճնշման միջականական կարողությունը, կիրառանան ձեռք բերել իրենց իրավունքներն ու այնպիսի իշխանություն, վոր պատշաճ և նրանց՝ վորպես բոլոր հարստություններն ստեղծողների:

Կոմիտե՝ Կարլ Մարքս, Կարլ Շապակեր, Հ. Բառեր,
Ֆ. Ենգելս, ի. Մոլլ, Վ. Վելիքի:

Փարիզում այն ժամանակ եր հշխում եր հեղուփոխական լեգիոնների հրապուրանքը: Իսպանացիները, իտալացիները, բելգիացիները, հորմանացիները, լեհերը և գերմանացիները միավորվում եյին ջոկատների մեջ, վորպեսզի դնան իրենց հայրենիքն ազատելու: Գերմանական լեգիոնը գլուխություն եյին Հերվեդը, Բոռնշտեգտը, Բեռնշտայնը: Վորովգետե

բոլոր ռատար բանվորները հեղափոխությունից անմիջապես հետո վոչ միայն աշխատանքից զրկվեցին, այլև սկսեցին ազգաբնակության կողմից նեղվել, ուստի և հոսանքը գեպի այդ լեզունները մեծ եր: Նոր կառավարությունն ուղղում եր լեզուններն ոգտագործել ոտար բանվորներից ազգամիջնամասները մեծ եր: Նոր կառավարությունն ուղղում եր լեզուններն ոգտագործել ոտար բանվորներից ազգամիջնամասները մեծ եր: Նոր կառավարությունն ուղղում եր լեզուններն ոգտագործել ոտար բանվորներից ազգամիջնամասները մեծ եր: Նոր կառավարությունն ուղղում եր լեզուններն ոգտագործել ոտար բանվորներից ազգամիջնամասները մեծ եր:

Մենք ամենայն վճռականությամբ դուքս յեկանք այս հեղափոխություն խաղալու դեմ: Այն ժամանակ Գերմանիա ներխռութում կազմակերպել, յերբ այնտեղ ամենայեռանդում էր տեղի ունենում, և բռնությամբ նրա վկին փաթաթել դրսից ներմուծված հեղափոխություն, այդ կոչանակեր խաթարել Գերմանիայի հեղափոխությունը, ուժեղացնել կառավարությունները, իսկ լեզունականներին իրենց—դրա համար լամարտինը յերաշխափոր եր—անդեն հանձնել գերմանական զորքերին: Յերբ հեղափոխությունը Վիեննայում և Բեռլինում հաղթանակեց, լեզունի կազմակերպությունը գարձալ բոլորովին աննպատակ, սակայն այնուամենայիլ խաղը, մի անդամ արդեն սկսվելուց հետո, չդադարեց:

Մենք գերմանական կոմունիստական ակումբ հիմնեցինք և այնտեղ համոզում եյինք բանվորներին, վոր լեզուն չմանեն, այլ առանձին—առանձին հայրենիք վերադառնան և այնտեղ շարժման ոգտին աշխատեն: Մեր հին բարեկամ Ֆլոկոնը, վորը ժամանակավոր կառավարության անդամ եր յեզել, մեր ուղարկած բանվորների համար ուղեկորման նույն արտօնությունները ձեռք բերեց, ինչ խոստացել եյին լեզունականներին: Այս յեղանակով մենք Գերմանիա

վերադարձինք 300—400 բանվոր, վորոնց մեծ մասը Միության անդամներն եյին կազմում:

Ինչպես վոր հեշտ եր կանխատեսել՝ ժողովրդական մասաների հարուցած շարժման հանդեպ Միությունը ներդրեծության չափազանց թույլ գործիք հանդիսացավ: Միության անդամների յերեք քառորդը, վոր առաջ արտառահմանում եյին ապրում, հայրենիք վերադառնալով՝ փրխեցին իրենց ընակալայրը. նրանց նախկին համայնքները ոքա հետեւանքով մեծ մասամբ լուծվեցին, և Միության հետ ամեն կապ նրանք կորցրին: Նրանց ամենափառասեր մասը նույնիսկ փորձ ել չարեց այդ կապը վերականգնելու, սակայն ամեն մեկն առանձին իր սեփական խոճով և ոխոկով սկսեց իր ապրած տեղում փոքրիկ սեպարատ շարժում ստեղծել: Վերջապես, ամեն մի առանձին փոքր սկետության մեջ, ամեն մի գավառում, ամեն մի քաղաքում, պայմաններն այնքան տարբեր եյին, վոր Միությունն ի վիճակի յեր միմիայն ամենաընդհանուր գիրեկտիվներ տարու. սակայն ավելի լավ եր մամուլի միջոցով տարածել այդ դիրեկտիվները: Մի խոսքով՝ հենց վոր վերացան այն պատճառները, վորոնց հետեւանքով զաղանի Միությունն անշրաժեցան եր, գաղտնի Միությունն ել վորակն այդպիսին կորցրեց ամեն նշանակություն: Յել այս ամենից քիչ կարող եր գարմացնել նրանց, ովքեր գաղանի Միությունը զրկել եյին դաշտադարձ բնույթի վերջին մասցորդներից:

Այժմ, սակայն, պարզվեց, վոր Միությունը հեղափոխական գործունեյության հրաշալի գպրց եր յեղել: Հոկտեմբերի վրա, վորտեղ «Նոր Հոկտեմբերան թերթը» հուսալի կենտրոն եր ներկայացնում, նասսառ քաղաքում, Հոկտեմբերայն Հետեւանում և այլն—ամենուրեք ծայրահեղ դեմոկրատական շարժման գլուխ կանգնած եյին Միության անդամները: Նույն ել Համբուրգում եր: Հարավային Գերմանիայում այդ բանին խանգարում եր մանր—բուրժուական վեմուկրատիվի գերակշռությունը: Բրեմենավորում մեծ հաջողությամբ մինչև 1848 թ. ամառը դործում եր վիլհելմ վոլֆը.

նա Սիլեղիայումն ել Ֆրանկֆուրտի պառլամենտի պատգամավորության թեկնածուի մանդատ ստացավ: Վերջապես, գրաշաբ Ստեֆան Բոռնը, վոր Բրյուսսելում և Փարիզում Միության գործոն անդամն եր, նեռլինում հիմնեց «Բանվորական յեղբայրությունը», վոր բավական տարածվեց և դիմացավ մինչև 1850 թ.: Բոռնը, սակայն, վոր տաղանդավոր մի յերիտասարդ եր, չափազանց շտապեց վրակն քաղաքական գործիչ հանդես դալով: Նա «յեղբայրացավ» ամենախայտարկետ խաժամուժի հետ, միայն թե իր չուրջը ամբոխ հավաքի: Նա բնավ այն մարդկանցից չեր, վորոնք ընդունակ են միասնություն մտցնելու հակասական ձգտումների մեջ, լույս բերելու քառոսի մեջ: Այդ պատճառով ել նրա յեղբայրության պաշտոնական հրատարակությունների մեջ միշտ հանդիպում ենք «կոմունիստական մանիֆեստի» հայացքների շփոթության համքարական հիշողությունների և ցանկությունների հետ, իութի Բլանի և Պրուդոնի հայացքների բեկորների հետ, պրոտեկտիստիմի պաշտամության հետ և այլն—մի խոսքով՝ այդ մարդիկ ուղղում եյին բոլորին դուր դալ: Նրանք գլխավորակես զբաղվում եյին գործադրումներ սարքելով, արհեստակցական միություններ, արտադրողական ընկերություններ հիմնելով, սակայն մոռանում եյին, վոր խնդիրն ամենից առաջ կայանում եր նրանում, վորպեսզի քաղաքական հաղթանակի միջոցով սկզբում այնպիսի ասպարեզ նվաճեն, վորտեղ միայն կարող եյին այդպիսի բաներ հաստատում, հուսալի կերպով իրագործվել: Յել ահա, յերբ ուսակցիայի հաղթանակները յեղբայրության առաջնորդներին ատիպեցին այդ հեղափոխական պայքարին ուղղակի մասնակցելու անհրաժեշտություն գդալ, այն ժամանակ, ինքնին հասկանալի յե, նրանց չուրջը խմբված անդարդացած մասսան լքեց նրանց: Բոռնը ժամանակցեց Դրեզդենի 1849 թ. մայիսի ապստամբությանը և բարեբաստիկ պատահականությամբ փրկվեց: «Բանվորական յեղբայրությունը» պրոլետարիատի քաղաքական մեծ շարժումից իրեն հեռու յեր պահում, վորպես կզգիացած մի

միություն, վոր մեծ մատամբ միայն թղթի վրա գոյություն ուներ և այն աստիճանի յերկորորդական դեր եր խաղում, վոր ուսակցիան պետք համարեց այն փակել միայն 1850 թ., իսկ նրա բաժանմունքները՝ շատ տարիներ հետո միացն: Բոռնը, վորի խսկական անունը Բուտերմիլիս եր, այնպես ել չղարձավ խոշոր քաղաքական գործիչ, այլ դուրս յեկալ փոքրիկ շվեյցարական պրոֆեսոր, վորը հիմա վոչ թի Մարքսն ե թարգմանում համքարական լեզվի, այլ բարեհոգի թենանը՝ քաղցրավուն գերմաներեն լեզվի:

1849 թ. հունիսի 13-ով Փարիզում, մայիսյան ապրատամբության պարտությամբ Գերմանիայում և ուսուների ձեռքով հունգարական հեղափոխությունը ճնշելով վերջացավ 1848 թ. հեղափոխության մեջ ժամանակաշրջանը: Սակայն ուսակցիայի հաղթանակը վոչ մի դեպքում գեռ վերջնական չեր: Անհրաժեշտ եր վերակազմել ցրված հեղափոխական ուժերը, իսկ դրա հետ միասին նաև Միության ուժերը: Ընդհանուր դրությունը, ինչպես և մինչև 1848 թ., պրոլետարիատի վորմեն բացահայտ կազմակերպություն թույլ չեր տալիս, ուստի դարձյալ անհրաժեշտ եր գաղտնի կաղմակերպվել:

1849 թ. աշնանն առաջվա կենտրոնական կոմիտեների և կոնդրեսների անդամների մեծամասնությունը դարձյալ յերեացին կոնդրոնում: Պակասում եյին միայն Շապակերն ու Մոլլը: Շապակերը կիսրագենում գտնվում եր բանտարգելության մեջ և 1850 թ. գարնանը, իր արդարանալուց հետո, նա ևս կոնդրոն յեկավ: Մոլլը մի ամբողջ շարք կուսակցական ամենավանդապոր հանձնարարություններ և աղիտացիոն ուղևորություններ կատարելուց հետո—իմբեջո Պֆալցի Հրետանու համար Հոկենույան գալառում գտնվող պրոլետական բանակում հեծյալ թնդանոթաձիգներ եր հավաքագրում,—մտավ Վիլլիսի ջոկատը, բեղանսոնյան բանվորական վաշտը և Մուրգի ճակատամարտում Ռոտենֆելդի կամուրջի առջե սպանվեց՝ դլիմին ստացած գնդակից: Սակայն դեռ փոխարեն յերեաց Վիլլիսը: Վիլլիմն ըստ զգացմունքի

այն կոմունիստներից եր, վորոնց այնքան հաճախ հանդիպում եք Արևմայան Գերմանիայում սկսած 1845 թ.: Հենց այդ պատճառով ել նա բնագլաբար թագնված ոպողիցիայում եր գտնվում մեր քննադատական ուղղության նկատմամբ: Ավելին: Նա խակական մարդարե յեր, վորը համոզված եր նրանում, թե ճակատադիրը կանխորոշել է իրեն դառնալ գերմանական պրոլետարիատի ազատազրողը, և վորպես այդպիսին նա հավանում եր իրեն համարել քաղաքական և ուղղմական դիկտատուրայի ուղղակի թեկնածու: Վայոլինդի քարոզած հինգրիստոնեական կոմունիզմի կողքին, այդպիսով, առաջ եր յեկել յուրատեսակ կոմունիստական իսլամ: Այս նոր կրոնի պրոպագանդան, ի միջի այլոց, տակալին դուրս չեր դալիս այն եմիցրանտական կազմարայի սահմաններից, վորի հրամանադատարը վիւթին եր:

Այսպես, ուրեմն, Միությունը վերակազմված եր, բայց թողնվեց հայելիվածում տալիքած՝ 1850 թ. մարտի կոչը, և Հայնրիխ Բաուերը վորպես եմիսար ուղարկվեց Գերմանիա: Այդ կոչը, վոր Մարքսն ու յես ենք խմբագրել, հետաքրքրություն են ներկայացնում նաև այժմ, վորովհետև մանր-բուրժուատական դեմոկրատիան դեռ հիմա ել այն կուսակցությունն ե, վորը յելլրոպական մերձակա ցնցումների դեպքում, —իսկ այդ ցնցումները շուտով տեղի կունենան (յելլրոպական հեղափոխությունների միջև լնկած ժամանակամիջոցը—1815, 1830, 1848—1852, 1870—մեր դարում 15—18 տարի յե տեսում), —Գերմանիայում անպայման առաջինը կառավարման դեկի մոտ վորպես հասարակությունը կոմունիստական բանվորներից փրկող: Հետևաբար, այնտեղ ասվածներից շատ բան կիրառելի յե նաև ներկա մոմենտի նիստամամբ: Հայնրիխ Բաուերի ուղևորությունը կատարյալ հաջողությամբ պատկեց: Այս փոքրիկ ուրախ կոշկակարը բնածին դիմանադետ եր: Նա նորից հավաքեց մի ակտիվ կազմակերպության մեջ Միության նախկին անդամներին, վորոնք մասամբ աշխա-

տանքից հեռացել եյին, մասամբ ել աշխատում եյին իրենց սեփական սիսկով: Նա այնտեղ ներգրավեց նաև «Բանվորական յեղբայրության» այժմյան առաջնորդներին: Միությունն սկսեց զեկավար դեր խաղալ բանվորական, դյուդացիական և մարմնամարզական ընկերությունների մեջ անհամեմատ ավելի մեծ չափով, քան մինչև 1848 թ., այսպես վոր համայնքներին ուղղված մերձակա հերթական (յերեք ամիսը մեկ անգամ) դիմումը, վոր ապագրեց 1850 թ. հունիսին, արդեն կարող եր արձանագրել, վոր մանր-բուրժուատական դեմոկրատիայի կողմից ամբողջ Գերմանիայում շրջող՝ Բոնի քաղաքացի ուսանող Շուրցը (հետաքրքրում ամերիկական եքս-մինիստր) «բոլոր բանիմաց տարրերը գտավ արդեն Միության ձեռքում»: Միությունն անպայման միակ հեղափոխական կազմակերպությունն եր, վոր Գերմանիայում նշանակություն ուներ:

Սակայն այն նողատակները, վորոնց պետք ե այդ կազմակերպությունը ծառայեր, կախված եյին պլասմավորակես այն բանից՝ արդյոք հեղափոխության նոր վերելքի հույսերն արդարանում են: Իսկ այդ՝ 1850 թ. ընթացքում հետպատե դարձալ քիչ հավանական և նույնիսկ անհնար: 1847 թ. արդյունաբերական ճգնաժամը, վոր նախագատրաստեց 1848 թ. հեղափոխությունը, վերացել եր: Ակսել եր մի նոր, մինչ այդ չտեսնված արդյունաբերական բարութաճման ժամանակաշրջան: Ամեն մեկի համար, ով աչքեր ուներ տեսնելու և տեսնել եր ուզում, պետք ե պարզ լիներ, վոր 1848 թ. հեղափոխական փոթորիկը հետզհետե ինքն իրեն սպառել եր:

«Այդպիսի ընդհանուր բարդավաճման ժամանակ, յերբ բուրժուատական հասարակության արտադրողական ուժերը զարգանում են այնքան փարթամորեն, վորքան այդ առհասարակ հնարավոր ե բուրժուատական հարաբերությունների մեջ, իսկական հեղափոխության մասին խոսք անգամ լինել չի կարող: Այդպիսի հեղափոխություն հնարավոր ե միայն ժամանակաշրջաններում, յերբ այդ յերկու աղդակնե-

բը—ժամանակակից արտադրողական ուժերը և արտադրության բարերարության ձևական ձևերը—իրար հետ հակասության մեջ են մտնում: Անվերջ գժառությունները, վորոնցով կարգապահության կոնտինենտալ կուսակցության առանձին ֆրակցիաների ներկայացուցիչներն իրար փոխադարձաբար ուժառապառում և արտավորում են, վոչ միայն առիթ չեն տալիս նոր հեղափոխության, այլ ընդհակառակ՝ հնարավոր են միայն այն պատճառով, վոր գոյություն ունեցող դրության հիմքն այժմ այնքան ամուր և և—ինչ ուշակցիան շգթան—այնքան բուրժուական:

Բուրժուական զարգացումը կասեցնելու բոլոր ուսուցիչն փոքքներն անկալիած նույնական կյորսակալվեն այդ հիմքին դիմունով, ինչպես դեմոկրատների քարոյական վրդովմութեան ու բոլոր բոցավառ պրոլիարացիաները»: Այսպես ենք գընէլ մենք—Մարքսը և յես—«1850 թ. մայիս—Հոկտեմբեր տեսության» մէջ, «Neue Rheinische Zeitung. Politisch-Oekonomische Revue»-ում, V և VI հեft, Hamburg, 1850 թ. S. 153:

Սակայն զրության այսպիսի զգաստ ըմբռնումը շատերին հերձվածողություն եր թվում այն ժամանակ, յեր Լեդրյուտովենը, լուի Բլանը, Մաձինին, Կոչուտը, իսկ ավելի քիչ նշանակություն ունեցող գերմանական աստղերից՝ Ռուդին, Կինկելը, Գեզը և նմանները խմբերով Լոնդոնում ապագա ժամանակավոր կառավարություններ եյին կազմում վոչ միայն իրենց հայրենիքների համար, այլ ամբողջ Յեվրոպայի համար, և յեր այդ ամենը հանգեց սոսկ այն բանին, վոր Ամերիկայից հեղափոխական փոխառություն ձեռք բերելու միջոցով անհրաժեշտ միջոցներ հայթայթեն անհապաղ յեվրոպական հեղափոխություն կազմակերպելու համար և միաժամանակ, ինքնին հասկանալի յե, մի շարք փանազան հանրապետություններ կազմակերպելու համար: Ո՞ւմ կարող և զարմացնել այն փաստը, վոր դրան մասնակցեց Վիլիմի պես մեկը, վոր Շապակերն ել, հին հեղափոխական բոցով բռնկվելով, իրեն հիմարացնել տվեց և վոր գլխա-

վորապես եմիդրանտներից բաղկացած՝ կոնկրենի բանվորների մեծ մասը նրան հետևելով մտան հեղափոխական գործերի բուրժուական մեծությունների լատերը: Մի խոսքով՝ մեր պաշտպանած զարդարությունն այդ մարդկանց քիմիկով չեր չեղափոխությունը: Նրանց կարծիքով չեր պետք էր սկսել հեղափոխությունը: Մենք ամենալճուական կերպով հրաժարվում եյինք գրանից: Առաջ յեկալ պառակտում: Շարունակության մասին կարելի յէ կարդալ «Մերկացումներում»: Այսուհետեւ տեղի ունեցավ նախ Նոթյունդի ձերբակալությունը, ասդ հառապտինը՝ Համբուրգում, վոր Քյոլնում կենտրոնական կոմիտեյի անդամներին մատնեց և դարձավ զարժանածն: Դատավարության ընթացքում նա պետք է հանդես գար իրեն գլխավոր վկա, սակայն նրա ազգականներն այդ խայտառակությունից խուսափելու համար նրան ուղարկեցին Ռիո-դե-Ժանեյրո, վորտեղ նա հետադարձ հաստատվեց իրբե վաճառական և, ի վարձատրություն իր ծառայությունների, նշանակից սկզբում պրուսական, իսկ հետագայում՝ գերմանական զինավոր Հյուպատոս: Այժմ նա-դարձյալ Յեվրոպայումն է:

Հետեւալը լավ հառկանալու համար՝ յես կերեմ Քյոլնի մեղադրյաների ցուցակը—1) Գ. Գ. Ռեզեր, բանվորգլանակագործ. 2) Հայնրիի Բյուրգերս, վոր հետազայտմ մեռավ վրաբես լանդապետի առաջադիմական պատգամավոր. 3) Պետեր Նոթյունդ, գերձակ, մեռավ Բրեսլավյում, վորտեղ նա աշխատում եր իրեն լուսանկարիչ. 4) Վ. Ի. Ռայֆ. 5) դոկտոր Հերման Բեքեր, այժմ Քյունի ալագ քաղաքագլուխ և տերերի պալատի անդամ. 6) դոկտոր Ռուբենդ Դանիելս, բժիշկ, մեռել և դատավարությունից միքանի

1 Շապակերը մեռավ 1870 թ. Լոնդոնում: Վելլիխը մասնակցեց Ամերիկայի քաղաքացիական կոիզմերին և պատվանդան ստացավ: Լինելով բրիգադի գեներալ՝ նոր Մերֆրիսորոյի (Տենեսոի) հակառամարտում կրծքից վիրաբորվեց, սակայն թշշկվեց և մեռավ մոտ 10 տարի առաջ Ամերիկայում: Աւորում եմ նշել, վոր վերոհիշյալ յաւա անձերից հայնրիիս բառերը անհետ կորալ Ավստրալիայում, Վայոլինդի, ու Եվրոպեկը մեռան Ամերիկայում: (Ենգելսի ծանրքագրությունը):

տարիք հետո թոքախուց, վոր բանտումն եր ստացել.
7) Կազմ Ռոտո, քիմիկոս. 8) գոկտոր Արքահամ Յա-
կոբի, այժմ բժիշկ Նյու-Յորկում. 9) դոկտոր ի. Յա-
բլայն, այժմ բժիշկ և քաղաքային խորհրդի անդամ Քյու-
նում. 10) Ֆերդինանդ Ֆրայլիդբատ, վորը, սակայն, այն
ժամանակ արդեն Լոնդոնումն եր. 11) ի. լ. Երհարդ, գոր-
ծակառար. 12) Ֆրիդրիխ Լեսներ, դերձակ, այժմ ապրում
է Լոնդոնում: Յերգլյաների գտարանը, վորի գոնրաց
նիստը աեց 1852 թ. Հոկտեմբերի 4-ից մինչև նոյեմբերի
12-ը, դատավարուց պետական դալաճանության փորձ
կատարելու համար Խեցերին, Բյուրգերին և Նոթունդին
6 տարիք բներդարձելության, Խայֆին, Ռոտոյին և Բեքերին՝
5 տարիք, Լեսներին՝ 3 տարիք. Դանիելսը, Քլայնը, Յա-
կոբին և Երհարդը արդարացան:

Քյունի դատավարությամբ վերջանում է գերմանական
կոմունիստական բանվորական շարժման առաջին շրջանը:
Դատավարությունից անմիջապես հետո մենք ցրեցինք
մեր Միությունը: Միքանի ամիս անց Վելլիս-Շալպերի
անդամ միությունն ել (Sonderbund հոգին ավանդեց:

Այն ժամանակվա անցուղարձի և ներկայիս իրազար-
ձությանների միջև մի ամրող սերնդի կյանք և անցել:
Այն ժամանակ Գերմանիան արհեստագործության և ձեռքի
աշխատանքի վրա հիմնված տնային արդյունաբերության
յերկիր եր, այժմ նա խոշոր արդյունաբերության յերկիր
և, վարտեղ անընդհատ արդյունաբերական հեղաշրջումն
կատարվում: Այն ժամանակ պետք եր վնասություննել
առանձին բանվորներ, վորոնք գիտակցելին իրենց դրու-
թյունն իրեւ բանվոր և իրենց պատմատնտեսական հակա-
զրությունը կապիտալին, վորովհետեւ այս հակագրու-
թյունն ինքն այն ժամանակ միայն նոր եր ծնունդ առնում:
Այժմ ստիպված են գերմանական ամրող պրոլետարիատին

բացառիկ որենքների յենթարկել, վորպեսզի դեթ մի քիչ
դանդաղի նրա զարգացման ընթացքը դեպի իր՝ վորպես
Ճշշված դասակարգի՝ դրությունը լիովին ըմբռնելը: Այն
ժամանակ այն սակավաթիվ մարդիկ, վորոնք հասել եցին
պրոլետարիատի պատմական դերի ըմբռնման, պետք եր ընդ-
հատակում աշխատելին, գաղտագողի հավաքվելին Յից
մինչև 20 մարդ ունեցող փոքր խմբերով: Այժմ գերմանական
պրոլետարիատը կարիք չունի պաշտոնական կրազմակերպու-
թյան՝ վոչ բացահայտ, վոչ գաղտնի: Միանման մտածող
դասակարգային ընկերների պարզ, ինքնին հասկանալի կապը
բավական է, վոր առանց վորեւե կանոնադրության, առանց
կոմիտեների, վորոշումների և նման շոշափելի ձեռքի սա-
ռանի գերմանական ամրող կայսրությունը: Բիոմարքը
միջնորդ զատավլոր և Յեվրոպայում, Գերմանիայի սահ-
մաններից դուրս. սակայն յերկրի ներսում որեցոր աճում
և գերմանական պրոլետարիատի հետզհետեւ ամելի սպառ-
նական գարձող հոկայի կերպարանքը, վոր Մարքսը կան-
խատեսել եր զիւ 1844 թ., մի հոկա, վորի համար արդեն
խիստ նեղ և ֆիլիսոփերի համար կառուցված պետական շնո-
քը, և վորի հզոր կազմվածքը և լայն թիկունքն ամրապնդ-
վում են՝ կանխատեսելով այն վայրկյանը, յերբ բավական
և վոր նա ուղղվի, վորպեսզի կայսերական սահմանադրու-
թյան ամրող շենքն ամերիկական վերաբերի վերածի: Ավելին: Յեկ-
բուպական և ամերիկական պրոլետարիատի միջազգային
շարժումը հիմա այնքան ամրապնդվել է, վոր վոչ միայն
նրա առաջին նեղ ձեւը, գաղտնի Միությունը, այլև նրա
յերկրորդ՝ անսահմանորեն ամելի լայն ձեւը՝ բացահայտ
«Բանվորների միջազգային ընկերությունը»—սկսել են կաշ-
կանդել նրան: Բավական և համերաշխության պարզ զգաց-
մունքը, վոր հիմնված և գասակարգային դրության միա-
նման ըմբռնման վրա, վորպեսզի բոլոր յերկրների և լե-
զուների բանվորների մեջ ստեղծվի և պահպանվի պրոլե-
տարիատի մեկ մեծ կուսակցություն: Այն առանձնքը, վո-
րի ներկայացուցիչը 1847—1852 թ. Միությունն եր և վո-

բի վրա այն ժամանակի իմաստուն Փիլիստերները, ուսերը սեղմելով, նայում ենին ինչպես խելագարների զառանցանքի վրա, ինչպես միքանի առանձնացած աղանդավորների գաղտնի ուսմունքի վրա,—այլ ուսմունքն այժմ ունի անթիվ հետևորդներ աշխարհի բոլոր քաղաքականիքին յերկրներում, Սիրիիի կալանավոր համբագործների մեջ և Կալիֆորնիայի վոսկեհանքերի բանվորների մեջ։ Իսկ այդ ուսմունքի հիմնադիրը, իր ժամանակի ամենաառվածածած, ամենից շատ զբարարաված մարդը՝ Կարլ Մարքսը՝ մինչև իր մահը Հին և Նոր Աշխարհի ոլորդեւտարիատի խորհրդականներ, վորին միշտ դիմում ենին և վորը միշտ պատրաստ եր ողնելու խորհրդով։

Լուդոն, 1885 թ. հոկտեմբերի 8

ԱՌՄՈՒՆԵՍՏԱՆԵՐԻ ՄԻԱԽԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԸ

Պրոլետարիատ բոլոր շերկուների, միացնելով
Հասված I

ՄԻԱԽԹՅՈՒՆՆ

Հոդված 1. Միության նպաստակն և՝ բուրժուազիայի տակալումը, պրոլետարիատի տիրապետությունը, ճին, գասակարգերի ներշակության վրա հիմնալած բուրժուական հասարակության վոչնչացումը և առանց գասակարգերի ու առանց մասնավոր սեփականության նոր հասարակության հիմնումը։

Հոդված 2. Պայմաններ, վորոնց պետք և բավարարեն Միության անդամները։

ա) այս նպատակին համապատասխանող կենցաղակարությունն և գործունեցությունն.

բ) հեղափոխական խանդ և ալյուն պրոպագանդայի մեջ։

գ) կոմունիզմի դավանությունն.

դ) չժամանակցել վոչ մի հակակոմունիստական քաղաքական կամ ազգային ընկերության և հաղորդել վորեև ընկերության մասնակցելու մասին համապատասխան դեկանարկությունն.

յե) յինթարկվել Միության վորոնցումներին։

զ) Միության բոլոր ներքին զործերի մասին լինել գաղտնապահ։

ե) միաձայն ընդունելություն համայնքի մեջ։

Ֆ. Ենգելս—3



Ավ գաղարում ե այս պայմաններին բազմարելուց, դուքս ե արվում (տե՛ս Հատված VІІІ):

Հոդված 3. Միության բոլոր անդամները հավասար են, նրանք յեղայրներ են և, իրեւ այդպիսին, պարտավոր են ամեն պայմաններում իրար ողնել:

Հոդված 4. Միության անդամները կրում են միութենական կոչանուններ:

Հոդված 5. Միությունը կազմված է համայնքներից, ոկրուգներից, զեկավար ոկրուգներից, կենտրոնական Կոմիտեյից և Կոնդրեսից:

Հատված II

ՀԱՄԱՅՆՔ

Հոդված 6. Համայնքն կազմվում է առնվազն յերեք և առառավելն քսան մարզուց:

Հոդված 7. Ամեն մի համայնք ընտրում է ավագ և նրա ովնական: Նախագահը զեկավարում է ժողովները, ոգնականը վարում է դրամարկղը և, ավագի բացակայության դեպքում, փոխարինում է նրան:

Հոդված 8. Միության նոր անդամների ընդունելությունը կատարվում է համայնքի ավագի և Միության անդամի կողմից, վորը համապատասխան առաջարկ է մտցրել՝ կանխավ ստանալով համայնքի համաձայնությունը:

Հոդված 9. Տարբեր տեսակի համայնքները միմյանց հայտնի չեն և իրար հետ վոչ մի հարաբերություն չունեն:

Հոդված 10. Համայնքները կրում են գանազան անուններ:

Հոդված 11. Միության ամեն անդամ, վորն իր ապրելու տեղը փոխում է, պետք է այդ մասին իր ավագին հայտնի:

Հատված III

ՈԿՐՈՒԹ

Հոդված 12. Ոկրուգն ընդուրելում է ամենաքիչը յերկու և ամենաշատը տաս համայնք:

Հոդված 13. Այդ համայնքների ավագներն ու ոգնականները կազմում են ոկրուգային կոմիտեն:

Հոդված 14. Ոկրուգային կոմիտեն գործադիր իշխանություն և ոկրուգի բոլոր համայնքների համար:

Հոդված 15. Առանձին մնացած համայնքները պետք է կամ միանան արդեն գոյություն ունեցող ոկրուգին, կամ ուրիշ առանձին մնացած համայնքների հետ կազմում են նոր ոկրուգ:

Հատված IV

ԴԵԿԱԳԱՐ ՈԿՐՈՒԹ

Հոդված 16. Մի յերկրի կամ մի մարզի տարբեր ոկրուգները յենթարկվում են մի զեկավար ոկրուգի:

Հոդված 17. Միության ոկրուգների բաշխումը գավառների և զեկավար ոկրուգների նշանակումը կատարվում է կոնդրեսում կենտրոնական կոմիտեյի առաջարկությունը:

Հոդված 18. Զեկավար ոկրուգը գործադիր իշխանությունն է տոյալ գավառի բոլոր ոկրուգների համար: Նա հարաբերություններ ե ապահովանում այդ ոկրուգների և կենտրոնական կոմիտեյի հետ:

Հոդված 19. Նոր կազմվող ոկրուգները միանում են մերձակա զեկավար ոկրուգին:

Հոդված 20. Զեկավար ոկրուգները հաշվետու յեն նախապես կենտրոնական կոմիտեյին, իսկ վերջին ինստանցիայով՝ կոնդրեսին:

Հատված V

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հոդված 21. Կենտրոնական կոմիտեն ամբողջ Միության գործադիր իշխանությունն է և, իրեւ այդպիսին, հաշվետու յե կոնդրեսի առաջ:

Հոգված 22. Նա կազմված եւ առնվազն հինգ անդամից
և ընտրվում եւ այն քաղաքի ոկրուղային կոմիտենից, վորը
կոմքեսի կողմից նշանակված եւ վորպես Կենտրոնական
կոմիտեի նստավայր:

Հոգված 23. Կենտրոնական կոմիտեն հարաբերություն-
ներ եւ պահպանում զեկավար ոկրուղների հետ: Նա ամեն
յիրեք ամիսը մեկ անդամ հաշվետվություն և կազմում ամ-
բողջ Միության դրության մասին:

Հատված VI

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Հոգված 24. Համայնքները և ոկրուղային կոմիտեները,
ինչպես և Կենտրոնական կոմիտեն ժողով են դումարում
առնվազն յերկու շաբաթը մեկ անոնք:

Հոգված 25. Ոկրուղային կոմիտեների և Կենտրոնական
կոմիտեի անդամներն ընտրվում են մեկ տարով, կարող են
վերընտրվել և ամեն ժամանակ հեռացնել իրենց ընտրող-
ների կողմից:

Հոգված 26. Ծնուրությունները տեղի յեն ունենում սեպ-
տեմբերին:

Հոգված 27. Ոկրուղային կոմիտեները պետք եւ զեկա-
վարեն համայնքներում տեղի ունեցող դիսկուսիաները՝
Միության նպատակներին համապատասխան:

ՅԵԹԵ Կենտրոնական կոմիտեն գտնում ե, վոր վորոշ
հարցերի քննարկումն ընդհանուր և անմիջական հետաքրը-
քըրականություն և ներկայացնում, ապա նա կարող է այդ
հարցերն ամբողջ Միության քննարկմանն առաջարկել:

Հոգված 28. Միության առանձին անդամներն առնվազն
յիրեք ամիսը մեկ անդամ, իսկ առանձին համայնքները՝
ամիսը մեկ անդամ պետք է հաշվետվություններին
կոմիտեի առաջ:

Ամեն մի ոկրուղ առնվազն յերկու ամիսը մի անդամ
պետք եւ հաշվետվություն ուղարկի զեկավար ոկրուղին,

իսկ ամեն մի զեկավար ոկրուղ առնվազն յիրեք ամիսը մեկ
անդամ պետք եւ Կենտրոնական կոմիտեյին հաղորդի տվյալ
մարզի դարձերի դրության մասին:

Հոգված 29. Միության յուրաքանչյուր կոմիտե պար-
տավոր և իր պատասխանատվությամբ և կանոնադրության
սահմաններում ամեն միջոց ձեռնարկել, վոր անհրաժեշտ են
Միության պահպանման և յեռանդուն դործառնության հա-
մար, և այդ մասին անհապաղ հաղորդել բարձրագույն ինս-
տանցիաներին:

Հատված VII

ԿՈՆԳՐԵՍ

Հոգված 30. Կոնգրեսն ամբողջ Միության որևէնսուիր
իշխանությունն է: Կանոնադրության փոփոխության վերա-
բերյալ բոլոր առաջարկները զեկավար ոկրուղներն ուղար-
կում են Կենտրոնական կոմիտեյին և որա միջոցով ներկա-
յացնում կոնգրեսին:

Հոգված 31. Ամեն մի ոկրուղ մեկ պատգամավոր եւ
ուղարկում:

Հոգված 32. Յերեսունից ւ ակաս անդամ ունեցող ամեն
մի առանձին ուղարկում և մեկ պատգամավոր,
վաթսունից պակաս անդամ ունեցողը՝ յերկու, իննունից
պակաս ունեցողը՝ յիրեք և այն: Ոկրուղները կարող են
իրենց ներկայացնեցիք ուղարկել նաև Միության այն
անդամներին, վորոնք տվյալ վայրին չեն պատկանում, սա-
կայն արդ գեպքում նրանք իրենց պատգամավորին մանրա-
ման մանդամ պետք եւ ուղարկեն:

Հոգված 33. Կոնգրեսը գումարվում է ամեն տարի
ոգոստոսին: Արտակարգ դեպքերում Կենտրոնական կոմիտեն
հրավիրում է Արտակարգ կոնգրես:

Հոգված 34. Կոնգրեսը միշտ նշանակում է այն քաղա-
քը, վորոնք պետք եւ գտնվի Կենտրոնական կոմիտեն հա-
ջորդ տարվա ընթացքում, ինչպես և այն քաղաքը, վորոնք
հետեւյալ կոնգրեսը պետք է գումարվի:

Հոդված 35. Կենտրոնական կոմիտեն համագումարին ներկա յել մինում, բայց առանց վճռողական ձայնի:

Հոդված 36. Կոնդրեսը ամեն նստաշրջանից հետո բացի իր ըրջաբերականից բաց և թողնում նաև Մանիքեստ՝ կուսակցության անունից:

Հատված VII

ՊԱՐՏԱԿԱՆՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հոդված 37. Ավ խախտում և անդամության պայմանները (Հոդ. 2), նայած հանդամանքներին, հեռացվում կամ վտարվում է:

Վտարումը հետ ընդունվելու անհնար և դարձնում:

Հոդված 38. Վտարման հարցը վորոշվում է միայն կոնդրեսում:

Հոդված 39. Ակրուգը կամ առանձին համայնքը կարող է առանձին անդամներին հեռացնել՝ այդ մասին անհապաղ հաղորդելով ավելի բարձր ինստանցիային: Կոնդրեսն այս դեպքում էլ և ամենաբարձր ինստանցիան հանդիսանուում:

Հոդված 40. Հեռացված անդամների վերընդունելությունը կատարում է կենտրոնական կոմիտեն՝ ոկրուգի առաջարկությամբ:

Հոդված 41. Միության դեմ կատարված հանցագործությունների մասին դատելու յել ոկրուգային կոմիտեն, վորը և հսկելու յել դատավճռի կատարմանը:

Հոդված 42. Հեռացված կամ վտարված անդամները, ինչպես և առհասարակ կասկածելի անձերը, յենթարկվում են Միության հսկողությանը և պետք և անվտանգ դարձվեն: Այդ տեսակ մարդկանց մեքենայությունների մասին պետք են խոկույն հաղորդել համապատասխան համայնքին:

Հատված VIII

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Հոդված 43. Կոնդրեսը ամեն մի յերկը համար սահմանում է նվազագույն մուծումների չափերը, վոր Միության ամեն մի անդամ պետք է վճարի:

Հոդված 44. Այս մուծումների կեսը տրվում է կենտրոնական կոմիտեյին, մյուս կեսը մնում է ոկրուգի կամ համայնքի դրամարկղում:

Հոդված 45. Կենտրոնական կոմիտեյի միջոցները հատկացվում են՝

1) Վարչության և թղթակցության ծախսերը ծածկելու համար:

2) Գրոպագանդիստական թերթիկների տպագրման և տարածման համար:

3) Կենտրոնական կոմիտեյի կողմից վորոց նպատակով եմիսարներ ուղարկելու համար:

Հոդված 46. Տեղական կոմիտեների միջոցները հատկացվում են՝

1) Թղթակցության ծախսերը ծածկելու համար:

2) Գրոպագանդիստական թերթիկների տպագրման և տարածման համար:

3) Անհրաժեշտության դեպքում՝ եմիսարների առաքման համար:

Հոդված 47. Այն համայնքներին ու ոկրուգներին, վորոնք վեց ամսվա ընթացքում կենտրոնական կոմիտեյին մուծումներ չեն ուղարկել, կենտրոնական կոմիտեն հայտնում է Միությունից նրանց հեռացվելու մասին:

Հոդված 48. Ոկրուգային կոմիտեները պետք է յերեք ամսից վոչ ուշ իրենց համայնքներին հաշվետվություն ուղարկեն յեկամուների և ծախսերի մասին: Կենտրոնական կոմիտեն կոնդրեսին հաշվետվություն և ներկայացնում Միության Փինանսները վարեկու և Միության դրամարկղի

Դրության մասին։ Միության գումարների ամեն մի վատ-
նում խստագույն կերպով պատժվում է։

Հոդված 49. Արտակարդ ծախսերը և Կոնդրեսի ծախ-
սերը ծածկվում են արտակարդ մուծումների միջոցով։

Հատված X

ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 50. Համայնքի ավագը նոր ընդունվող անդա-
մին կարդում է 1—49 հոդվածները և բացատրում, կարճ
դիմումով առանձնապես նշում է այն պարտականություն-
ները, վոր ընդունվողը հանձն է առնում, այնուհետև նրան
հարց է տալիս. «Յանկանո՞ւմ ես արդյոքայս Միության մեջ
մտնել»։ Ցեթե ընդունվողը պատասխանում է «այո», ապա
ավագը նրանից ազնիվ խոսք է վերցնում, վոր նա Միու-
թյան անդամի պարտականությունները կկատարի, հայ-
տարարում է նրան Միության անդամ և առաջիկա նիստում
նրան համայնքի կազմի մեջ է մտցնում։

1847 թ. աշնան Յերկրորդ Կոնդրեսի անունից՝

Նախագահ՝ Կարլ Շավաեր
Քարտուղար՝ Ենգելս

Լանգոն, 1847 թ. դեկտեմբերի 8

Թարգմանիչ Հակ, Հարությունյան
Հայերեն թարգմանության Խմբագիր Բ. Ն. Գովյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Մրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբազրիչ Լ. Արովյան

Թլավլիսի լիազոր № Կ-2483, հրատ. № 653

Պատվ. № 40, տիրած 10.000

Բղթի չափով $59 \times 83 \frac{1}{16}$ (32.550 տպ. նիշ 1 տպ. մամուլում)

$2\frac{1}{2}$ տպ. թերթ, $1\frac{3}{4}$ թերթ թուղթ

Հանձնված է արտադրության 20/II 1939 թ.

Սուրագրված է՝ տպագրելու 5/III 1939 թ.

Քինը 50 կ., կազմը 30 կ.

Գետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության
տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 65



3

142

Հ | Арм.
2-34372

ԳԻՒԲ 50 Կ.

Ф. ЭНГЕЛЬС
К ИСТОРИИ
СОЮЗА КОММУНИСТОВ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

«Ազգային գրադարան



NL0174480

H 2-3437a